

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ահա մեզ մօտ միաժամանակ հիւրեր են երեք փաւոն աստղեր արտիստական աշխարհում՝ տիկին Ժիւլիէ, օր. Նիկիտան, պ. Ռալֆէնաուէր։ Վերջինիս Թիֆլիսի և Բաքւի հասարակութիւնները ծանօթ են երկու-ւրեք տարւանից դէս, իսկ առաջինները առաջին անգամն են ոտք դնում Կովկասի մարաքաղաքը։ Այդ երեքից որի վերաւ է ամենից շատ լարւած հասարակութեան ուշադրութիւնը, մի փոքր դժուար է ասել։ Սկզբում անկասկած Ժիւլիէն էր ամենից գրաւիչը։ Բանն այն է, որ տիկին Ժիւլիէ կը գաւիւն է մեզ մօտ երբ նորա մասին ամենքը վաղուց լսել են, թէ օսլերտի թագուհին է, և մինչդեռ Նիկիտան և Ռալֆէնաուէր երկուսն էլ ապագային են պատկանում, տիկին Ժիւլիէ կը արդէն իւր արտիստական ասպարիզի արեւմուտքին է հասել։

Մի քանի տարիներ ես—և նա միանգամայն կը հեռանալ ասպարիզից։ Նա արդէն մօտ 45 տարեկան կին պէտք է լինի, մինչդեռ նորա խաղացած դերերը մեծամասնաբար սիրահար ջահիլ աղջիկներ են ներկայացնում։ Եւ այն դերերից որ նա կատարում է, շատերը ստեղծւած են կատուկ նորա, տիկին Ժիւլիէի համար, երբ նա, գլխաւորապէս եօթանասնական թւականներին, դեռ ևս երիտասարդ էր և Պարիզի Variété (Վարիետէ) թատրոնի ուժեղ մադնիսն էր։ Variété թատրոնի համար Ժիւլիէ կը ալն էր, ինչ Comédie française թատրոնի համար Սարա Բերնարն էր։ Այժմ այդ երկուսն էլ թափառում են, մէկը, Սարա Բերնարը՝ Ամերիկայում, Ժիւլիէ կը գլխաւորապէս Արեւելեան երկիրներում՝ Սֆիպոսս, Կ. Պոլիս, Թիֆլիս և այլն։ Պարիզի համար նա արդէն ժամանակը ացէկացրել, բաց և աւնպէս տաղանդը մնացել է, վարպետութիւնը կատարեալ է։ Եւ առիթ ունեցաւ ալս անգամ նորան տեսնելու Ռուսոտ, Լիլի, Նիժնի և Նիտուշ պիեսներում։ Բացի Նիժնիից, որը անմիտ պիես է, բոլոր մնացեալներում տ. Ժիւլիէ կը անճման է խաղում։ Այդ չորսից Ռուսոտը (Շիկահէր) ըստ իս ամենից լաւ պիեսն է, ապա Լիլի և չետու միայն Նիտուշ։ Լիլիի դերը մէջ ևս տեսել եմ տ. Ժիւլիէին տասներկու

տարի առաջ, Պարիզի վերինտէ թատրոնում, երբ արտիստուհին ղեռ ևս իւր փառքի աճման շրջանումն էր։ Անկասկած է որ ժամանակը իւր զրօշմը կնքել է նորա վերապ, Բալց և ալնպէս տաղանդը մնացել է։ Գովել ալդ տաղանդը ինձ չի պատկանում. ամբողջ աշխարհը արդէն դատել է նորան. Եւ եթէ ես ալնու ամենալին կանգ եմ առնում նորա վերապ, ալդ ոչ թէ տ. Ժիւդիկի փառքի վերապ մի վկայութիւն ևս աւելցնելու համար է, ալ միայն մի ցանկութիւն՝ բնաորոշելու նորա տաղանդը և արժանիքը, միաժամանակ և պարտք կատարելու ընթերցողներին առջև։ Թեթիս սէր— ահա տ. Ժիւդիկի ժանրը. բալց կոմիկական գծերը մի ալդ տեսակ թեթիս սիրով՝ արտապատել պարզօրէն, ճիշդ չափով, քնքշութեամբ, հումորով և հաւասար թեթեւութեամբ—ահա տիկ. Ժիւդիկի մեծ տաղանդը, Սիլաւներ նա չի անում— և ինչ կատարում է՝ անում է կատարելութեան տպաւորութիւնը թէ խօսելու, թէ շարժելու և թէ երգելու մէջ։ Նրբ հարկաւոր է՝ նա մի ջախէլ անմեղ աղջիկ է, աշխարհքից անտեղեակ. երբ հարկաւոր է նա մի կոկոտ կին է ամենաբարձր շրջանների. երբ հարկաւոր է՝ մի պառաւ կին է բարոյականութեան դասեր տուող, Նորա երգերը— շանսոնետներ են, օպերետալիւն երգեր. ունենալով լեզուի աննկարագրելի ճկունութիւն— նա, երգելով անման կերպով արտապատում է որպէս մարդկալին ծաղրելի թուլութիւնները, Նոյնպէս և զանազան դրութիւնները։

Տիկին Ժիւդիկի խաղացած օպերետները մի առանձին տեսակի են։ Օպերետների մէջ էլ կան լուրջերը, կան և թեթեւները։ Ժիւդիկի համար գրւածները— հէնց ալդ թեթեւներիցն են. լուրջ օպերետների մէջ մուգիկան առաջնակարգ տեղ է բռնում. ալդտեղ արտիստը՝ երգիչն է և երգչուհին, ինչպէս և օպերալի մէջ։ Օրինակ կարմենը— օպերետ է, և կարմենի դերը կատարողը անպատճառ պէտք է մշակւած լաւ ձայն ունենալ և երգեցողութեան լուրջ չկուլա անցած երգչուհի լինի։ Այլ է տիկին Ժիւդիկի համար գրւած օպերետները, ուր երգեցողութիւնը լոկ հատ-հատ երգեր են— շանսոնետներ, — որոնք ոչ ալնքան ձայն են պահանջում, որքան մի առանձին տաղանդ՝ երգի կոմիկականը դուրս բերելու։ Եւ շատ անգամ ալն, ինչ կաղմում է մի ալդպիսի երգի հիմքը և հրապույրը, ալդ ալն հունարն է, որով նա երգի մէջ զգացնել է տալիս մի որ և է պարզ գործողութիւն նից առաջացած ձայն, օրինակ՝ ձայնը կակալ կոտրելուց, սառը ջրից նոր դուրս եկածի դողդողոց, զինւորական փողի ձայնը, զանգակի հնչիւնը կամ երեխալի, երիտասարդի, ծերի ու պառաւի խօսակցութիւններ և ալն և ալն։ Տիկին Ժիւդիկի համար գրւած օպերետների մէջ գործողութիւնը առաջնակարգ տեղն է բռնում, ալնպէս որ նորա տաղանդը չափւում է ոչ միայն շանսոնետներ երգելու կարողութիւնով, ալ ղեռ ամենից առաջ խաղի կատարելութեան աստիճանով. իսկ ալդ աստիճանը ալնքան բարձր է, որ ալ ևս քննադատութիւնը խօսք չի պանում ստելու։ Դորա վերապ է հիմնում Ժիւդիկի տաղանդի հոյակեր։

